

Տրամադրանքներ

ԸՐԱԳԻՐ

Դատարանական Դատաւարական և Զեկարանական

ԵՐԱՊՈՐՏԱՆԻ ՏԵՐԻՆ, 1842 թ. 69

ԳՐԱԳԻՐ

ՈՒՐԻՆԹ 16 ՅՈՒՆԻՍԵՐ 1842

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Երևան:

Լուսավորութեան հոգաբարձուներուն մէջ ևս նոր բարեկարգութիւններ մտցունելով՝ Բարանթի-նայի գործակալներուն մէկ մասին ճամբայ տրելին, ու մնացածներուն ամսականներն ալ քիչցուցին:

— Դորին Վ սե. Բի Էֆէնտին, առ օրերս կը մեկնի ասկէջ Լոնտոն երթալու համար. Վ. Բի-նայի օգնական յիշեալ մայրաքաղաքին ընդհանուր հիւպատոսը Բարանթի-նայի կողմէն է, որ քա-նի ատենէն ի վեր հոս է, իր տեղը պիտի դառնայ Վ. Վ սեմուլեան հետ:

— Դ. Վ սե. Բի Էֆէնտին ալ մօտեցաւ Վին-նա երթալու պատրաստութիւն կրտսնայ:

— Բարանթի-նայի հրաման եղաւ, թէ ո՛ր որ ա-կէջ ետեւ գրեւն մէկը բերել տալու ըլլայ առ մայ-րաքաղաքը՝ անոր հետ գտաւ մը ունենալուն համար, կրպարտաւորի երաշխաւոր մը պրոյունել ան եկող մարդուն ծախքը և կրած վնասները հատուցանե-լու, թէ որ գտար կրտսնայուն ըլլայ:

— Բարանթի-նայի Լոյտի շտաբանը՝ որ անցած շաբթու Գերուլի գնաց, մեծ գումար ստակ խրիկէ-հոն կառավարութիւնը, որպէս զի Բարանթի-նայի ղեկավարը զօրքերուն ամսականը տրելի:

ԲԱՆԱԿԱՐԱԿԱՆՔ

Սրտաշարժ զխառնած մը:

Բնական գեղեցիկ գիշեր մը՝ երբոր լուսինը իր ճա-նապարհներով գիշերաւան աստի մութը կը փարատէր, ու խորին լուսութիւն մը տրեւելով գաշտին մէջ՝ միայն թէ ատեն ատեն քաղցրիկ հով մը կը փչէր, ու կ'ողամտնէր կանաչագեղ տերեւները քիչ մը կը շարժէր, և ալ միտա-կուն գեղէն ևս կը գտնայի, որ անդ զուարճալի օր մը անցուցնէր էի: Վալերով կը գիտէի երկինքը՝ ուր անդ անդ ամպերով պատած էր, ու անդ անդ ալ փայլուն աստղերով զարդարած, ուստի երբոր խորունկ մտածու-թեան մէջ՝ զարմանալով կը զննէի Բնական սքանչելի գործքերը, մէկ ամպ մը նստածացուց վայրկեանի մը չափ լուսինն պայծառութիւնը, ու իլմէ քիչ մը հետոյ յան-կարծ մէկ բան մը՝ որուն ինչ ըլլալը չի հասկըցայ, ու-ժով մը գետնը ինկաւ, ու ճամբուս բերանը գոցելով՝ գլորեցաւ իրեք չորս քայլ անդին: Եւ անոր վախով՝ որ սովորաբար գիշեր ատենը կը զգանք, ու վտանգ կը-բերէր մտքներն քանի որ ոտքերն իս քիչ մը սահէ, ապ-

ԼԱՍՈՐԵՍԻԱՆ

Լազարանդիայէն հետեւալ լուրերը աւելնք Պէրուլի վրայով:

« Սերաքէր Լազարանդիայ փաշան Պէրուլի հա-նէլէն ետեւ, Լազարանդիայ և Տիւրքիստան մէկ-մէկու հետ ունեցաւ խառնութիւններն զաղբիւրս. ու առ աղետալի գործքին մէջ Էֆէնտին յանցաւոր գըտ-նելէ ցան Տիւրքիստանը, իրենց թշնամութիւն ու յա-փառակութիւն սիրող գործքին բարբոթը:

« Բարանթի-նայի» որոնք կողպտուրած են, գե-ղեցիկն ալ էրած ըլլալով՝ Պէրուլի գաշտին մէջ կը բնակին հիմակ շատ խառնութեամբ, թէպէտ և բազմաթիւ կառավարչի կրպակին չափ անոնց խիստ հարկաւոր եղած բաները կը հոգայ:

« Տիւրքիստան և Լազարանդիայի գլխաւոր շէ-խերը Պէրուլի եկան, ուր կը սպասեն որ տեսնան թէ ինչ որոշումներ պիտի ընէ քաղաքի մեծ ժող-վը՝ որ մօտ օրերս ըլլալու է յատկապէս Լազարան-նու անցքերուն համար. որպէս զի առ երկրի բա-րեկարգութիւնը վերադառնալու համար, ու մէյմ՝ ալ ասանկ անկարգութիւններ չի պատահին: Եւ ժողովոյն մէջ գտնուելու են, Դորին Վ սեմուլեան Սերաքէր Լազարանդիայ փաշան, որ Վ. Վ սե-փառութիւնը մասնաւոր պաշտօնով խրկած է երկ-րիս խառնութիւնը զաղբիւրսներէ համար. Լազարան-դիայ. Սերաքէր փաշայ՝ Սալտայի կառավարչի:

չեցայ մնացի. ու գործը զաւարտելով՝ երբեք ևս կը թափի ու-կրեմն գէպի տուլ:

Բայց մէկէն ի մէկ խորունկ հասաւորքի մը ձայն լսելով՝ որ հոգեւոր մարդու մը խորագուն կը մտնէր, ցրուեցան իմ կասկածներս. գուցէ ու թշուառներուն օգնելու հա-մար ընակաւն աղքատները՝ քաջալերեցին զիս որ անոր քովը երթամ: Եւ իսկ ընկաւ կարծեցի թէ՛ գիտնով մըն է, որ կարողութիւն չունի ոտքի վրայ կայնելու. բայց երբ որ վերվերցունելով զնեցի անոր պլազունեալ գէպը, որ յայտնի կը ցուցանէր իր թշուառութիւնը, իր անօթու-թիւնը և ցաւը, իմացայ որ խիստ մեծ գործադուլեան մէջ է. և իր կնիքը ստատիկ սկարութեան պատճառաւ էր: Ո՛ր կը թափէր, ո՛վ էր գոյք, հարցուցի անոր, Վիտես թէ առ խօսքերէն զօրութիւն մը առաւ, ու իր ու-նեցած քիչ մը ուժը վրան ժողելով՝ հաղիւ թէ կը ցաւ պատասխան տալու:

— Մանկութեան զոհ եղած յուսահատեալ հայր մըն եմ ևս, ուսկից իր գեղաբոյս զաւակները պարապ տեղը հաց կը խնդրեն. . . : Զի կը ցաւ շարունակել. հեծ-կտուրը արդիւնց իր խօսքը, ու սկսաւ գտնել արցունքներ թափել: Ո՛րչափ գերազանց է միտմարանք տրուող մը

Լազարանդիայ փաշայ՝ Լազարանդիայի կառավարչի. Սե-հեմալ Սեհալ փաշայ՝ Լազարանդիայի ֆէրիք. Սեհեմալ փաշայ. Լազարանդիայ փաշայ. և բոլոր տեֆտարանե-րը և նահանգին պաշտօնատէր պէյերը:

« Սերաքէր Լազարանդիայ փաշային գալուն կը սպա-սեն, որ արդէն ճամբայ ելած է, ժողովը սկսելու համար:

« Հասարակօրէն շատ կը գնահատին Տիւրքի շէ-խերուն գաղտնի նարքներէն, որոնք կը ջանան որ յանցաւոր չի գտնուին. նաև փափագ կը ցուցու-նեն որ Լազարանդիայ իշխանը Տաշիկ մը կամ մէկ Տիւրքի մը ըլլայ: Ամանք կը կարծեն թէ պիտի կը-նան տանք իրենց խորհուրդը գլուխ տանել:

« Սեհալ կողմէն Լազարանդիայ իշխան մը կը խնդ-րեն Տիւրքի տընէն, որ ծեր Լազարանդիայի Պէշերն ալ՝ որ հիմակ Լազարանդիայի տընէն է, և անոր յաջորդը Լազարանդիայի տընէն ևս, նոյն ցեղէն են: Լազարանդիայ շատուցում կը խնդրեն Տիւրքիստանէն, ու անոնց ա-նիտա հարստահարութիւններէն ինչ վնաս որ կրած են մինչև հիմայ, անոր փոխարէնը կը պահանջեն:

« Լազարանդիայ փաշան ևս ասոնց խնդիրքը իրաւացի սեպելով՝ խօսք տրվաւ որ յատկապէս ի-րենց համար գիր մը գրէ Լազարանդիայի Լազարանդիայ:

« Սերաքէր փաշայ՝ Սալտայի կառավարչի:

առաքելութիւնը, որ երբ խառն մարդ մը կը տեսնայ. թէպէտ չափէ գոյս իր սիրտը կը ցաւի անոր թշուառու-թիւններուն վրայ, բայց կաշխատի որ իր սրտին կսկիծը ամենեւին չի մոռցունէ. ու քաղցր խրատներով կը միտմարտէ սիրտ կուտայ անոր. ու ասանկով առողջարար սպեղանի մը գրած կը լայ անոր սրտի վերքերուն վրայ: Սերաքէր անձանց թիւն լացը տեսնալու՝ ևս ալ սկսայ արցունք թա-փել. որն որ յանցանք մը սեպելով ինծի՝ ծածուկ կը-սրբէի, ու կը ջանայի որ անիկա չի տեսնայ: Արովհետեւ գործող մարդուն թշուառութիւնը՝ ալ էֆէնտին անտանելի կը լայ թէ որ իր ցաւը գրգռող խօսքեր լսէ ուրիշէն. ինչպէս որ քիչ մը կը թիւնեցայ և թէ քաջալերութիւն տրուող մը ըլլայ նէ անոր:

Հաղիւ թէ քանի մը րոպէ անցնելէն ետեւ սիրտս հան-գարտեցաւ ու սկսայ խօսիլ հետը ու յորդորել որ պատմէ ինծի իր ցաւալի պատմութիւնը, հաստատելով թէ ևս պատրաստ եմ ամեն ջանքով հոգ տանելու անոր մէկ ճար մը գտնալու: Եւ ևս խօսքի խօսքս՝ երկինքը բացելուն՝ կամ մէկ աստղ մը կը խնայուին պէս, որ ալեկոծութեան մէջ լեղապատաւ եղած նաւապատին յոյսը կը խորոգէ, ան-ծանօթ մարդուն ցաւալից սիրտը միտմարտեց ու գիտես

րաժանելով՝ շատ մեծ կոտորած կրնէ . քիչ ատենի մէջ 300 հոգի մեռան առ հիւանդութենէն :

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լ.Թէնք, 8 Յունվար :

Սիր Աթրէֆօրդ Վաքինիկ անդղիացոց նոր դէս պանը , ամենու 5 ին Սեբեփ շողենաւը մոնտրով , մեկնեցաւ Յունաստանէն ուղղակի Կոստանդնուպօլիս երթալու : Լ.Թէնքի մէջ շատ սրտիւ տեսաւ առ դեսպանը թէ թագաւորէն և թէ ուրիշներէն :

Ս . Վաքինիկ թագաւորին և պաշտօնատարներէն հետ բրած երկար խորհուրդներուն մէջ , ոչ միայն Յունաստանի ինչ վիճակի մէջ ըլլալը իմացաւ , այլ նաեւ մեծ ուշադրութեամբ քննեց հակառակութեան արմատները : Կառավարութիւնը կը յուսայ թէ անշուշտ կարգի կըդնէ Տաճկաստանի հետ եղած դժուարութիւնները . շատերը կարծեցին թէ հասարակութիւնը յայտնի չի գիտեր որ Տաճկաց տէրութեանը հետ եղած վէճը կարգի դրած են Նաբոպա , Լոնտրայոն յուլիս 1 . դաշնադրութեան ստորագրողները՝ որոնք միաբանութեամբ ջանացին ան վէճը վերջացնելու . բայց ընդհակառակը սիր Աթրէֆօրդ Վաքինիկ դեսպաններուն և կառավարութեան պաշտօնատարներուն խորհուրդին մէջ յայտնի կըլիսէր ան բանին վերայօք :

Կըհաստատեն թէ Ս . Մովսէսօրտաթոն Կոստանդնուպօլիսի դեսպան անուանեցաւ . ընդհանրապէս առ ընտրութիւնը՝ անոր քաղաքականութեան քաջ հմուտ և խելացի ըլլալուն պատճառով է . դաւ և ու չէ թէ երկու տէրութեան մէջ պատահած վէճերը վերջացունելու համար :

Քանի մը ատեն է Տաճկաց կառավարներուն վերայով խօսք մը չըլլար , և կերևայ թէ առ զործը բոլորովին լռեցած չէ : Ինչպէս կըկարծուի որ կալուածքներուն վերաբերեալ վէճին որոշմունք մը ըլլալու չէ , մինչև Լոնդոնացոց դեսպանին Կոստանդնուպօլիս հասնելը , և գուցէ մինչև Ս . Մովսէսօրտաթոնի երթալը :

Հռչակաւոր Ալալէնդճա խաւովարտը , սահմա-

նադիւի զանազան կողմերը չի կրնալով ապստամբութիւն հանել , անցածները նաւը մոտաւ Սեբեփ երթալու : Կրտի թէ Ալալէնդճային միտքը սրիկայ մարդիկներ ժողովել է Լոնդոնացոցի կողմներէն :

ԶՄԻՆՈՒՆԻՒՆ

16 Յունվար :

Զմեռնացի Մեծապատիւ Կոնստանտին Սկըրտի աղան , որ քանի մը տարիէ ՚ի վեր փարէզ էր մասնաւոր պաշտօնով մը՝ Կորին Բարձրութեան Մէհմէտ Լ. ի փաշային կողմանէ , այս անգամ ծանր հիւանդութիւն մը քաշելէն հետ , Սարսիլայէն անդղիական շողենաւը մտեր է Լոնդոն : Երկու օրէ մը համար . բայց նոյն օրը ալ հիւլիս ստատկանալով հիւանդութիւնը իր մահկանացու ընթացքը վճարել է , շողենաւը դեռ ծամբայ չելած : Աստի իսկոյն դուրս հաներ են անոր մարմինը , ու արժանաւոր պատուով թաղեր են :

Վաղաքիս հայոց ազգը յիշուի մեծ կորուստ մը բրաւ յիշեալ երկել անձին մահաւորը որն որ քաղաքական գործքերու քաջահմուտ ըլլալով՝ ազգիս պարծանք կըհամարուէր : Սիր Սկըրտի Մեծապատիւ զպարտունին վրայ ալ բաւական երախտիք ունի , ու անոր բարեկարգ յուսաբանութեանը համար շատ ազգասիրական ջանք բրաւ սկզբանէն անտի :

Կորին Սկըրտի Սաիտ փաշան՝ Լ. Սկըրտի ասնճախին միշտ , անցած ուրբաթ օր կէս օրէն ետքը Եղմիր հասաւ . ու ինչպէս ծանուցած ենք , ասկէց հետ հոս պիտի բնակի նոյն կողմի կառավարիչը :

Տեղւոյս մեծամեծ գործակալները յիշեալ փաշան զիմաւորելով՝ իր տատիճանին արժանաւոր պատուով ընդունեցին զնա . ու երբոր քաղաքը մը տաւ , (սմանեան Փրէկազը և ցամաքի պատնէշները թնդանթներ նետելով՝ ողջունեցին անոր գալուստը :

— Գուրպան պայրամի հանդէսը անցած շաբաթ առտու սկսաւ և իրիք օր տևեց :

— Լատրիական Փրէկազը՝ Վէնէոէ կողմ , անցած շաբաթ օր Կոստանդնուպօլիսէն եկաւ :

Թէ անոր տկարութեան ուժ մը տըւաւ . ինչու որ կաթոգին սիրով մը ձեռքերս սեղմեց ու աղաղակեց բարձր ձայնիւ :

— Արեւն դուն վշտակից կըլլաս ինձի . ու իմ գգնադրութիւններս լսելով՝ թեթեւեղ կուգես զանոնք . ո՛հ , ես այնչափ ապրիւնիկ չեմ եղեր ինչպէս որ կը երեւակայէի . որովհետեւ ահա միտթարութիւն կըգտնամ գթութենէ , որն որ հաստատ կըկարծէի թէ ինձի բոլորովին երեսէ ձգած էր . . .

Կասանք առւի մը եղերքը , ու իր պատմութիւնը սկսաւ ասանկ :

Միջակ աստիճանի՝ բայց պատուաւոր մարդու մը զաւակ էի ես , որ ինձի քիչ մը ժառանգութիւն թողուց , որն որ իր աշխատութեանը ու խնայողութեամբ բրած ծախքերուն պատուէն էր : Թէ որ կարգուէր ըլլայի , անշուշտ այն գրամով կընայի չափաւոր հանգստութեամբ կենանք մը վարելու : Ողորմելի հայրս ալ շատ ջանք կընէր որ կարգէր զիս համեստ աղէկան մը հետ . բայց աւաղ , չի կրցաւ իր սրտին փափագը լեցունել : Աստի անոր մեռնելէն երկու տարի ետքը , մէկ օր մը աղջիկ մը տեսայ , որ իմ վիճակիս հաւասար մարդու մը զաւակ էր . ու իր

գեղեցկութեանը հետ միաւորած էր նաեւ՝ քարկերթութիւնը և սքանչելի տաղանդները ողջոյն : Կասանկ հաղաւորիւս կատարելութիւններ տեսնալով՝ առ աղջկանը վրայ , իսկոյն խնդրեցի զանի իր ծնողքէն , ու անոնց հաւանութեամբ՝ ամուսնացայ անոր հետ : Սիր ամուսնական կապը փոխադարձ սիրով հիւսեցաւ , ու Լատրիոյ օրհնութեամբ՝ երկու տարուան մէջ երջանիկ հայր եղայ երկու զաւկի : Երբոր իմ ընտանեաց օգտին կընայէի ու պատուասէր չէի , ինչու որ բանի տեղ չէի գնէր այն պատիւները՝ ու պաշտօնները , ուսկից այնքան վիշտ ու հոգ կըծնանի : Սիրայի իմ կնկանս ու՛րաւ կընեւրուս համար կապրէի . բնաւ մէկ բանի մը ցանկանալով զիս չէի նեղացնէր : Եւն բաները որ մարդս խաղաղութեան ու երջանկութեան մէջ կըպահէր , բոլորն ալ ստացեր էի . չէի փոխեր իմ վիճակս աշխուրհիս ամենէն երջանիկ մարդուն ու արտօնութիւն ունեցողի մը հետ : Բայց աշխարհքիս երջանկութիւնը առաջօք ստուեր մըն է . բոլոր մը աւաղ՝ որ խիստ թեթեւ հոգ մը փութուն պէս աներեւոյթ կըլլայ , կոշտանայ . ու երբոր մարդս իր ձեռքին մէջ կըկարծէր զանի , մէյմալ կընայիս յանկարծակի վիշտ

— Գաղղիայի պատերազմական նաւերը՝ որոնց կըհրամայէ Լատրիոյ ծովապետը , հիմակուհիմայ Սեբեփ նաւահանգիստն են , ու ստէպ թնդանթներուն կըթուծիւն կընեն գնտակով (կիւլէ) :

Լոնդոն շաբաթ ցաւալի զիպաւ մը պատահեցաւ . Լա Սիլ - տը - Մարտէլ անունով մեծ նաւուն մէջ , երբոր թնդանթով կըթուծիւն կընէին . նաւատիկներէն մէկը՝ որ թնդանթ մը կըլեցունէր , չըլլելով որ կրակ տալու հրաման եղած էր , կամ չի կրնալով ժամանակին մէկ զի քաշել , թնդանթ թը վրան պարպւեր ու ջարդուբուրդ եղեր է ողորմելին :

Սօսիթէօր (Թթմանի մէջ կըկարդացել :

Լատրիոյս ամուսնին անցքերէն հետ քանի մը վէճեր ծագելով Լիւսաննու բնակչաց Կարնիկներուն և Տիւրքներուն մէջ , առ երկու ժողովրդոյ մէկըմէկու դէմ ունեցած տոտելութիւնը ան ատուի ծանր զրգուեցաւ , որ մէկ մեծ կռիւ մը պատճառեց : Տէրութիւնը անշուշտ կըպարտաւորէր մեծ փութով հոգ տանել առ զործին վրայօք . ինչու որ աղէտալի հիտեանքներ կընային առաջ դալ առ խաւովութիւններէն , ու հասարակութեան հանդըստութիւնը աւելելով , կըսպառնային բոլոր բարեկարգութիւնը խանգարել ու վտանգի մէջ դնել Լատրիոյս մէջ բնակող Բարձրագոյն Կարնիկ ուրիշ հպատակներուն հանգարտութիւնը :

Աստի տէրութիւնը աճապարեց զօրաւոր միջոցներ բանեցունել , որ նուաճէ առ երկու ցիւլին սրտմոտութիւնը . ու վերադառնալ հաստատեալ բարեկարգութիւնը և արգարութեան սկզբունքները՝ որ կը տիրեն ուրիշ գաւառներու կառավարութեանցը մէջ :

Լա խնամտուն խորհուրդները առաջ կուգան՝ Կորին Վահագնութեան իր հպատակաց վրայ ունեցած հայրական խնամքէն . վասն զի անոր հաստատ կամքը ան է որ կարգադրութիւնը և միտքն նութիւնը հաստատուի անոնց մէջ , ամէն մէկին իրաւունքը յարգելի , հոգ տուրի անոնց հանգստութեանը վրայ ապրուստի միջոցները զիւրացնելով , մէկ խօսքով անանկ ըլլայ որ ամեն մարդ վայելէ

մը կըհասնի անոր , ու տրամութեան մէջ ձգելով զինքը՝ թը շուստութեան կըփոխէ անոր երջանկութիւնը :

— Զոս տեղս լռեց ու սկսաւ արցունքները սրել՝ որ նորէն կըվազէին աչքերէն , ու քիչ մը շունչ առնել . այնքան տկար ու սիրտը կոտորած կըլեւար :

Լաբեպարտիս կալ մի , աշխուրհիս մէջ բոլոր եղանակները անցաւ որ ըլլաւ . մարդուս վիճակը որ և իջէ ընկերութեան կարգէ , ժամանակաւոր ու անհաստատ չէ՞ մի . և թէ նոյն ամենակարող ձեռքը չէ՞ մի որ ամեն բան կրնայ մեղի ու ետքը կառնէ զանոնք : Ի՞նչ որ այս ճշմարտութիւնները կըծանձնանք նէ , ինչու համար կըհպարտանանք երբոր բաղդը ծիծաղերիս կըլեւայ մեղի , ու գրեթէ առտելութեամբ կընայինք մեր եղբորը որ ձախորդութեան մէջ է : Ինչու համար սրտերնիս կըկտորի թէ որ նոյն բաղդը կըսկըսի խոժոռ գէմը ցուցնել , ու յաջողութիւնիս կըկորսընցունենք . ինչու համար անասնը մեր եղբորը վրայ կընախանձինք , որու գործքերը յաջող կըլիսին :

Լաբանիկը ու թշուաւը , հարուստը ու աղքատը , միմէ Լատրիոյ առջևը հաւասար ստեղծուածներ չեն մի . մի և նոյն բանականութեամբ զարդարած . բնութեան

բարեկարգութեան անհուն բարիքները և կատարեալ հանգստութիւն :

Բարձրագոյն Վրան տըւած հրամաններուն վրայ , նոյն կողմի կառավարութիւնը ինչ որ հարկ էր նէ ի դորժ դրաւ Վսորեստանի մէջ ծագած աղմուկները զաղրեցունելու , ու ան կերպ անկարգութեանց պատճառներուն առջին աւելելու համար : Վրանի մը ատենէ ՚ի վեր երկու կողմին թշնամութիւնը դադրած էր , բայց սակայն բարեկարգութիւնը և ապահովութիւնը բոտ ամենայն մասին կատարեալ հաստատուած չըլլալով , նաև ՚ի իր անսու ժողովրդոց ու Վսորեստանի ուրիշ կողմերուն կառավարութեան կարգադրութիւնները հաստատուեն հիման վրայ չըլլալով , Վեհափառ Վրբան արժան հոմարեցաւ Վսորեստան իրկել Վորին Վսեմութիւն Վերստեքը Վսուտաֆայ փաշան , անոր յանձնելով սա մեծ պաշտօնը որ անաչառ քննութիւն մը ընէ վերջին անցերուն վրայօք , բոլորովին բնաջնջ ընելով անմիաբանութեան և խռովութեան պատճառները . ու ջանայ ապահովել սա ընդարձակ դաւառին բաղմամբիւ ժողովրդոց հանգստութիւնը և բարեկարգութիւնը , հաստատելով հոն տեղ արդարութեան ու օրինաց կանոն մը Վորին Վեհափառութեան հայրապետ զիտաւարութեանցը համեմատ :

Վեհափառ Վրբան որ սա երեւի պաշտօնը Վորին Վսեմութեան Վսուտաֆայ փաշային յանձնեց , անոր միւշթէշար (խորհրդական) կարգեց նաև Վսուտար պէյը , արդարութեան գերագոյն տեսանի անդամ : Հետոյ Վսուտաֆայ փաշան և Վսեմութար պէյը իրենց յանձնեւած երեւի պաշտօնին վրայօք տեղի կուլիւններ ընդունելով , իսկոյն պատերազմական շղենաւերը մտան իրենց տեղը երթալու : Վունդ մը զօրք խրկուեցաւ Պէրութ , մէկ մասը Վերստեքին հետ և մէկալ մասը միշտ ան կողմը երթեալութիւն ընող շղենաւի մը հետ :

Վսեմ մարդ զիտցաւ որ խաղաղութիւն պիտի ըլլայ հոն տեղ երբոր սա պաշտօնը Վսուտաֆայ փաշային յանձնուեցաւ . որովհետեւ լաւ դիտէ անիկա Վորին Վեհափառութեան վեհանախկին զիտաւարութիւնները , ու շատ յարգելի բարք ունի և

միշտ յաջողակութիւն ու բարի նախանձ ցուցուցած է իր պաշտօնին գործառնութեանցը մէջ : Ընկերայ եւր որ իրեն յանձնեւած պաշտօնը բարեկարգ վախճան պիտի ունենայ , և պիտի արդարացունէ Վեհափառ արքային անոր վրայ ունեցած վստահութիւնը :

() Կարգութեան Վեհ անունով Վթէնքի օրադրութեանը մէջ կրկարգանք :

Վեհ կրեւիծն հարուստ յոյն վաճառականը , որ քաղաքէն դուրս առանձին տան մը մէջ կրնալ կէր , անցած շաբթու զողիւր սպաններ են զանի զիշեր ժամանակ ու տունը թալելու են : Բայց սա չարագործները շուտով բռնուեցան . և իմացանք որ զիշերը գողողը և իրենց գլուխը օտարական մըն է իր երկրի բանտէն փախած :

Վսոր վրայ կառավարութիւնը սկսաւ քննել բաղմամբիւ օտարականները որոնք անգործ կը պտուրին քաղաքիս մէջ . անոնք որ չի կրցան երաշխաւոր մը ցըցունել կամ իրենց ինչ գործքով ապրուստ ձարենին հաստատել , պահպանութեան տակ են հիմակ , և կը պարտաւորին առանց ատեն անցնելու հեռանալ տակէց : Բաղմամբիւ անձինք ալ որոնք զլիտովին կաւկածաւոր էին , ուրիշ անգամ յանցանքներ ըրած ըլլալով , բանտը զըրեցան :

Վս դգուշութիւնները շատ հարկաւոր էին . ինչո՞ւ որ մեր մայրաքաղաքին մէջ ուր տեղ ամեն մարդ զիտես թէ գեղը կը բնակի ու շատ անգամ առանկ գոյւած են զըւները որ ոտքով մը զարնելու ըլլայ մէկը կնոյն բանալ զանոնք . պէտք է ուրեմն որ կառավարութիւնը արթնան ինչայ բնակիչներուն հանգստութեանը համար . . . :

Վ նեւտիկի կապեղային մէջ կրկարգացել հետեւալ լուրը՝ զաղլիական օրագիրներէն առնելու :

« Վաղլիայի նորաղանդները միտք ունին որ մօտեւա մարտաբաններու ընկերութիւն մը հաստատեն իրենց մէջ , որպէս զի հիւանդանոցներու և

բանտարկեալ հիւանդներու խնամք ունենան , Սէօսար Դաւիթէ կոչւած հումեական եկեղեցւոյ մարտաբաններուն նման : Կը հաստատեն թէ արդէն սա բանիս համար հրաման առած են Վաղլիայի կառավարութեանէն . և թէ յիշեալ հումեական մարտաբաններուն պէս զգեստ պիտի հագնին ստոնք , ու բոլորովին անոնց պաշտօնը պիտի վարեն հասարակութեան մէջ : Վրդեօք ուխտ ընելով են մի . այս չնիք զիտեր . բայց անշուշտ պիտի նաղանդին իրենց կառավարիչաբաւոհին : ՎՏ . թէ որ Վսուտար աղանդապետը կարող ըլլար մեր մէջը գտնուել , կրնէ ՎՄ փաշա Վեհիփօն օրադրութիւնը , որչափ պիտի զարմանար տեսնալով որ առանկ մարտաբաններ ալ կը գտնուին իր գրօշակին տակը :

Սաղապի օրադրութեան մէջ հետեւալ զիտաւածը կրկարգացել :

« Վնցած ամսու վերջերը մեծ անկարգութիւններ պատահեցան Վօրֆուի մէջ , ու հասարակութեան սովորական հանգարտութիւնը տանկուվրայ ըրին :

« Վեկտեմբերի 24 ին բաղմամբիւ ժողովուրդ կար Սուրբ Սպիրիդիօնի եկեղեցին , որ սա կըղզին պաշտպանէ , ու այն օրը անոր տօնախմբութեան հանգէսը կը կատարուի : Երբ որ եկեղեցական աւարողութիւնը լրինալու վրայ էր , յանկարծ մեծ աղմուկ մը ծագեցաւ բաղմութեան մէջ , որուն պատճառը ամերիկացի լուտերական քարոզիչ մըն էր , որ քանի մը ատենէ ՚ի վեր Վօրֆուի մէջ բընակելով նոյն վայրկեանը ընտրած էր ասիկա ժողովուրդը յանդիմանելու կապաշտի տեղ զնելով զանոնք , ու խել մը յաւնարէն ընդունով Վթէնք տպած փոքրիկ տետրակներ բաժնելու անոնց , որոնց մէջ տասնաբանեայ պատուիրանները կային , նաև քանի մը հառաւանքներ Վսուտաճաշունչէն , և վկայութիւն մը Վատթէոսի աւետարանի իմ գըլլուէն :

« Ժողովուրդը աստիկ նեղանալով սա բանին իսկոյն յարձակեցաւ սա անխոհմ քարոզիչին վրայ , որ հաղիւ թէ կըցաւ մինչև իր տունը փախչել արտունօք վաղելով . որովհետեւ բաղմութիւն ժողովրդեան բարկացած ետեւէն ինկեր կը հալածէին զանի : Վոյն վայրկեանին ալ էվիլ շատցաւ ժողովրդեան թիւը յիշեալ ամերիկացիին տանը առջև . ու խել մը նախատական խօսքեր ըսելէն ետեւ անոր տանը դուռը կոտրեցին , ներս լեցեցան ու շատ անկարգութիւններ ըրին . բայց բարեբաղդութեամբ չի կըցան գտնել լուտերական քարոզիչը որ պահած էր սենեակի մը մէջ՝ երկրորդ զըստիկոնը :

« Կառավարութիւնը իսկոյն գունդ մը զօրք խըրկեց հոն , որ տանը մէջ գտնուողները բռնեցին բանտը տարին ու բաղմութիւնը ցրուելով՝ զաղալըցուցին աղմուկը : Հետոյ յիշեալ ամերիկացին ապահով տեղ մը տարին , որ վնաս մը չի հասնի անոր . ու հեռանայ այն կողմէն՝ կառավարութեան հրամանին նաղանդելով :

« Վս զիտաւածը պատճառ եղաւ հասարակութիւնը մեծ աղմուկի մէջ ձգելու . ու ան օրը թէպէտ ուրիշ բան մը չի պատահեցաւ , բայց ամսուս 25

նոյն իրաւունքները չունին՝ ն մի . նոյն փախճանին չէն մի ազատի : — Զս տեղ սկսաւ անձամ օժը իր պատմութիւնը շարունակել :

Իմ ստացուածքներս ստախ անգին ցրած կաւածքներ էին , որ իմ հայրս ժամանակով ստացեր էր զանազան երկիրներու մէջ : Ընհարին կը ըստ ինծի անոնց առմնուն հոգ տանիլ , ինչպէս որ կըլլայէ կաւածքի աքերեղոյն . ուստի երբ որ մէկուն հոգ տանելու կը պարագայէի մէկաներուն վրայ գրած անհատատրիմ վերակացուներս իմ ինչքս յափշտակելով կը հարստանային : Վսոր համար մտածելով ինքիրմէս՝ որ միայն մէկ տեղ մը կաւածք առնեմ՝ երբոր ստիթ պատահելու ըլլայ , ունեցածներս ծախեցի , ու անոնց գրամը սեղանաւորի մը արւի շահով , որ մեծ համարուէր ունէր հասարակութեան մէջ՝ թէ իր առաքնութեանը և թէ իր բարեկարգ գործքերուն համար :

Բայց ամեն փառքը լոյցով՝ որ մարդուս աւերելու կըլիտըտէ , ոսկի չէ . խարկայ երեւթները շատ անգամ կեղծաւորութիւնը կը ծածկեն , ու ասանկով չարագործ և խաղախ մարդիկ ծաղր կընեն և կը կործանեն իրենց հա-

ւատարիմ բարեկամները՝ որոնք կուրօքն կատարեալ վստահութիւն կը ցուցնեն անոնց վրայ : Վեկ ամիս չի կար ըրոր ստակս այն անօրէնին յանձնել , երբ որ անոր անանկութեան յայտարարական թուղթը քաղաքիս ամէն կողմը փակցուցած տեսայ : Հոսաւով գոնէ թշուառութեանս ձար մը գտնալ , վաղեցի գայի իմ իրաւունքս խնդրելու . ո՞վ սոսկալի հարուած , ինծմէ առաջ ուրիշներուն ունեցած պարտքը , շատ էվիլ էին իր պլտիկ դրամալուէն , որ գուցէ ատեն չէր ունեցեր փախցնելու կամ տեղ մը պահելու , ինչպէս որ շատերուն կը յաջողի սա անխրաւ գործքը . որով իրենց խեղճ ատենիքի տիրութեանը յոսահաստութեան մէջ չըլթողուն : Ըն ատենը իսկոյն հասկըցայ ինչ սոսկալի վեճակի մէջ գտնուիլ . միտքս ինկան կնկա , գաւկններս . ու սա մտածմունքը կը թուէր թէ խորին անգունդ բանալով՝ կը պատրաստուէր որջ որջ զիտ կը ըլլու :

(մնացորդը հետեւալ թիւով :)

ին՝ ք հետևեալ օրը, ալ էվելի մեծ խառնու-
թիւններ ծագեցաւ. ինչու որ գինեւորներ մը մէջ
երկու հոգի վիճաբանելով մէկմէկու հետ՝ որոնց
մէկը կողմին բնակիչներէն էր, և միւսը՝ բերդի
պահապան զինուորներէն, առջի օրուան անցքին վը-
րայով, նոյն տոները սաստիկ կռիւ մը սկսեցաւ ժո-
ղովուրդին ու զինուորներուն մէջ մինչև մէկը մէկ
զարկին, ու սա պատճառաւ բոլոր կողմին ազդեալ
վիճակի մը մէջ մնաց երկու իրեք օր:

«Ա՛յ իրջապէս 27 ին՝ կառավարութիւնը դատեց սա
խառնարարները ու հարկաւոր եղած միջոցները
բանեցունելով բարեկարգութիւնը ամեն տեղ
հաստատուեցաւ:

Պրօգ կոչված գեղին մէջ, Լօտէն անուն մէկ գէր
պանդուկապետ մը կար, որ շատ ատենէ ի վեր յո-
գայաւութիւն մը սըլը ունենալով կրտսնջովէր.
և թէպէտ շատ գեղեր կընէր, բայց բնաւ երբէք
օգուտ մը չէր տեսնար: Լօտ պանդուկապետին կինը
և քրոջը աղջիկը ուղեցին որ մէկ արտաւայտ հար-
քով բժշկէն զանի. ուստի հանկուցեցին անիկա
և սօսիի չնայող տերեւներով ծածկելով վրան չու-
նով մը փաթտելէն ետքը՝ զրին տապալակի մը մէջ,
և միայն գլուխը դուրս թողուցին: Հետոյ տախտա-
կի մը վրայ գնելով տաք փաւանը մէջ խօթեցին,
ուսկից հացերը նոր դուրս էին հաներ: Ողորմէն
սկսաւ սաստիկ աղաղակել, և կողաչէր ընտանեա-
լը որ դուրս հանեն զինքը. իսկ անոնք մօտիկ չը-
նելով անոր՝ կըսէին թէ քիչ մըն ալ համբերէ,
և թէ ցաւերդ բժշկուելու նշան է: Սակայն երբոր
տեսան թէ ստոյգ պիտի մեռնի, իսկոյն դուրս հանե-
ցին. Լօտէն ստակալի վիճակի մը մէջ էր. փրկան
սաստիկ տաքութիւնը զրեթէ հալեցուցեր էր անոր
գիրութիւնը. որն որ սաստիկ քրտինքէ պատճառ-
ւած է կընէր իր կինը:

Չուր հասուցէ՞ք. պաղ ջուր. կըլայտար
խղճալի պանդուկապետը, որ միշտ կըզգար թէ իր
ներսի զին կըսէ մը ինկած աղքատները կըլափէ.
քրոջը աղջիկը շուտով վաղեց մօտ եղած հորը և
ամենով մը ջուր բերելով լեցուց իր մօրեղբօրը
վրան: Լօտի ջապէս արունը սիրտը ելաւ և քիչ
օրուան մէջ՝ մեռաւ. Լօտէն աղետալի ցաւերով:

(Ա՛յ իգեռագիւռ Լօտանժէն:)

Լիւրամի օրագրութեան մէջ կըկարդայլի:

Թարանիւթ անիւայի մէջ նորահաս օրիորդ մը սի-
րահարելով մէկ հրեայի մը՝ Կարվինական կրօնքէն
Մովսիսականին անցաւ, և անոր հետ ամուսնացաւ
Մովսիսական օրէնքին արարողութեամբը: Լօտ աղջ-
կան ծնողքը և ազգականները շատ ջանացին որ
հեռացնեն անիկա իր զիտաւորութենէն, բայց չի
կրցին համոզել: Ուստի սա օրվան օրս արտաւայտ
շիպուած մը կը սեպէր սա բանը՝ թէ մէկ քրիստոն-
եայ մը հրեայ ըլլայ:

Բէլլէկընի Բլոթէօ անունով բանասերին գա-
ւաղանը պատգոնը, ութը հարիւր Փաւանքի ծախ-
ւեցաւ:

— Լափուէն Պանարաւթին փունջ մը մաղը

տասնը հօթը սթէւլինի ծախեցաւ. Լօտէնկամի
մէջ:

— Վլօթէւի գաւաղանը ծախու առաւ մէկը՝
երկու հազար չորս հարիւր Փաւանքի:

— Կարդէսիտի գաւաղը Վլորթի մէջ ծախու
առնուեցաւ հազար Փաւանքի:

— Ռուսօին ջերմաչափը ծախեցաւ 1500 Փը-
ւանքի. և ան գրասեղանը՝ որուն վրայ Ռուսօ գրե-
ր է Լօր Լլօթը ըսած գիրքը՝ 3000՝ Փաւանքի ծախ-
ւեցաւ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂԻՆ

Վիլլորիու, 19 Վեկտեմբեր 1841:

Բամպակ: Բաւական գործառնութիւններ եղան
սա շաբաթ. ու Հինտու և Վմերիդայի բամպակ-
ներուն գիներն ալ քիչ մը բարձրացան. սակայն ա-
ռաջին տեսակ լաւ ապրանքէն ծախու առնող չըլ-
լալուն համար, անոնց գիներուն փոփոխութիւն մը
չեղաւ: Վրանի մը վաճառական գնոյ առին 5500
պալեա Լմերիդայի ու 500 պալեա Վուրաթի բամ-
պակ պահելու համար որ ետքը աւելի գինով վա-
ճառեն. ուրիշ եղած ծախքերը բոլորը քաղաքին
մէջը քշվելու համար եղան. դուրս խրկելու համար
ամենեւին չի ծախվեցաւ: Օգոստոսի եղած
հաշիւներէն յայտնի կըլլայ որ, սա տարի ամեն
մէկ ամիս մէկըմէկու վրայ 105,677 պալեա քշվե-
ր է. անցած տարի՝ ամիսը 116,409 պալեա, ու 1839
ին ամիսը 97,312 պալեա քշվեւ է:

Պիտնալ արժան է որ սա տարվան տեղը ծախ-
ված բոլոր բամպակներէն տասը բամբինին մէկը
դուրս խրկվեցաւ. իսկ մնացեալ ինը բամբինը
քաղաքիս գործատուներուն մէջը քշվեցաւ: Հին-
տու բամպակներուն գործածութիւնը օրէ օր կա-
ւելնայ. անցած տարի միայն 217,500 պալեա եկաւ
Վիլլորիու, ու սա տարի 275,000 պալեա. ասի-
կա հարկաւորապէս Լմերիդայի վայնոյ բամպակ-
ներուն վնաս կուտայ: Լօտ շաբաթ զանազան տե-
սակներէն 28,220 պալեա ծախվեցաւ, ու 16,690
պալեա դուրսերէն եկաւ:

ԳՆԱԳՂԻՆ

Մարտիւ, 30 Վեկտեմբեր:

Բամպակ: Թէպէտ Լնգիդայէն եկած լաւ լու-
րերուն վրայ, կը յուսացվեր որ հոս ալ սա ապրան-
քին գիները քիչ մը բարձրանան, այսու ամենայնիւ
նոր փոփոխութիւն մը չեղաւ, ու միշտ մի և նոյն
անշարժութեան մէջ է թէ Լմերիդայի և թէ Լ-
զիպտոսի տեսակը: Իզմիրու բամպակները օրէ օր
ալ աւելի կըջնան ու գնոյ առնող խիստ քիչ կայ:

Մետաքս: Վիներուն նոր փոփոխութիւն մը
չեղաւ, թէպէտ Լնտուայէն եկած լուրերը յո-
շովակ են սա ապրանքին համար. և որովհետեւ
մետաքս ունեցողները ցած գիներով չեն ուզեր ծա-
խել, անոր համար քիչ գործառնութիւն եղաւ սա
շաբաթ:

Լապատաւակի մարթ: Վրիչ ապրանք կայ ու
սա օրվան արժողութիւնը հետեւեալն է:

Լաւջին տեսակը՝ 4³/₄–5 Փաւանք կէս քիլօկրամը:
Երկրորդ տեսակը՝ 2³/₄–3 ” ”

Լօտ գիներով 6 պալեա առաջին տեսակէն ծախ-
վեցաւ:

Թիֆթիք: Թուլ է ու բաւական ապրանք կայ
քաղաքիս մէջը. Լնգիդայի առաջին տեսակը՝ 46
սօլտի է. վարնոյը՝ 32 սօլտի. Հոլանտայի տեսա-
կը՝ 10 սօլտի ու կարմիր թիֆթիքը՝ 25 սօլտի. կէս
քիլօկրամը հարուրին 4–5 վար իջեցունելով:

Սոսամ: Վրիչ առաւուրը կըլլայ. պատրաստ
ապրանքին գինը՝ 51 Փաւանք է հարուր քիլօկրա-
մը. մարտ ամսվան մէջը աւանդելու պայմանով 48
Փաւանքի վաճառվեցաւ:

Չէթ: Վրիչ մը կուղի. որովհետեւ քանի մը
ատեն է որ շատ ապրանք չի գար ու գործատու-
ներն հարկաւորութիւն ունենալուն համար, սա
հեղանիւթին գինը քիչ մը բարձրացաւ. պատրաստ
ապրանքը՝ 125–126¹/₂ Փաւանք կըծախվի Եթիօթի-
րան: Լօտ տարվան առջի իրեք ամսվան մէջ աւան-
դելու պայմանով, 120¹/₂ Փաւանք կըծախվի:

Սապոն: Վրեժ անշարժութեան մէջ է. միայն 200
սունտուկ թխապաղոյն ապրանք ծախվեցաւ (աթիթէ)
43–46 Փաւանք լաւ տեսակին ու 100 սունտուկ
համբարանոցին մէջը (անգրեթօ) 33–35¹/₂ Փաւանք:
Շերմակ սապոնին գինը՝ 54¹/₄–54¹/₂ քաղաքին մէջը
ու 44¹/₄–44¹/₂ համբարանոցին մէջը:

ՓՈՒՆԵՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՍԻՒՈՒՆԻՆ

16 Յունվար 1842:

Լօտու	115 ¹ / ₂
Մարտիւ	181
Թիֆթիք	468–471
Հոլանտա	380
Լոտանգնապօլիս	$\frac{1}{4}$ – $\frac{3}{4}$ հարուրին

ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԼՆԸ ԵՒ ԸՆԴՈՐՈՐԸ
շաբաթը անգամ մը կը աղալի:

Տարեկան ստորագրութեան գինը՝ 120 դուռուշ է,
կանխիկ. ով որ ուղէ կընայ ստորագրվել:

Իզմիր՝ օրագրութեան ապրանք:
Պօլիս՝ երկրորդ խանը Սիմօնի Սիւրտիչ աղային
գրատունը:

Պուրոս՝ Վր. սպաքճեան Սատթէոս ու Վրիգոր աղայ-
ից մաղազան:

Լնգիդայի գրիտ՝ Լնգիդայեան Կարապետ աղային մա-
ղազան:

Հոպպէ՝ (Լաֆա) մեծապատիւ Սուրատ աղային
գրատունը:

Թիֆթիք՝ Լնգիդայի Վրիգոր աղային գրատունը:
Լնգիդայ՝ Հակոբճեանեան աղայ Սարգսին մաղազան:

Լնգի՝ Վր. արքիեպիսկոպոս Կարապետին մաղազան:
Տիարպէթի՝ Պարոն Վաթիկոսին մաղազան:

Լաշ՝ Պըլլըքլեան աղայ եղբարց մաղազան:
Պաղտատ՝ Լնգիդայի առաջին թարգման աղայ Խա-
չիկին սունը:

Վարէթ՝ Վանեան Կարապետից Հակոբ աղային
վաճառատունը:

Պոմպա՝ յարգի պարոնաց Լնգիդայի որդւոց և ընկե-
րաց վաճառատունը:

Սինկափոր ու Պաղտատ՝ յարգի պարոնաց Սէթ
եղբարց գրատունը: